

၁၈၂၅ ခုနှစ်၊ မြန်မာနိုင်ငြာနတေသန

Linh

1015

1999

43835-4. h.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

՚Ի ԽԱՐԲԵՐԴ

گلستان

Circular.



Armenia Colle

Harpoot.

1882.

o 28288-62

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅՈՒԹՈՅ

ՀԱՅՈՒԹՈՅ ՀԱՅՈՒԹՈՅ

ՀԱՅՈՒԹՈՅ

28 1015

10 45 60

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ՈՒԽՈՒՄՐԱՐՈՒՆԻ

Դ ԽԱՐԲԵՐԴ



Circular.



Armenia College,

Harpoot.

1882.

ՈՒՍՈՒՑԻՉ

ԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՅ

Պատ. Ք. Հ. Հովհաննես, Նախագահ

Պատ. Օ. Բ. Ալեք

Պատ. Հ. Ն. Պարիս

Պատ. Գ. Մ. Շմանկան

Բրոգ. Մ. Ա. Մելիք

Արշակ Գ. Շմանկան

Խաչատրյան Գ. Նահիև

Մերովյան Ա. Եղիշեան

Յարովյան Ա. Արմենիս

Յովհաննես Կաբառեան

Ուշեան Եղինակ

ԻԳԱԿԱՆ ԴՊՐՈՅ

Հ. Ալեք

Մ. Փ. [Ուսուչ]

Է. Ք. Հովհաննես

Ա. Մէժարութեան

Ն. Ա. Նէնքճանեան

Ա. Սոբէնեան

Թիւ կանոնաւոր ուսուցչաց	11
" օգնական "	10
Արական ուսուցիչք	21
Թիւ կանոնաւոր վարժուհեաց	6
" օգնական "	5
Թիւ ամենայն ուսուցչաց	32

ՈՒՍԱՆՈՂ. Բ

ԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Աստուածաբանականք	5
Սինէլը+ 7, ձէ-նէլը+ 7, Աօֆօնը+ 15 — 29	
Գրէլը+ 19, Մ-նանոր ո-նանոր+ 5 — 24 — 53	
Նախապատրաստական ճիւղ	72
Թիւ աշակերտոց	130

ԻԳԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ձէ-նէլը+ 3, Աօֆօնը+ 5, Գրէլը+ 7 —	15
Նախապատրաստական ճիւղ	78
Թիւ աշակերտուհեաց	93
" ամենայն ուսանողաց	223

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՅ ՈՒՍՈՒՄՆԱՐՈՒ

Այս Ուսումնարանն հիմնեալ է Ամերիկայի Քըրիստոնեայ հասարակութեան ինքնայօժան նուէրներովն եւ յիշեալ նուէրներէն գոյացած դրամագըլուխ մը ունի յԱմերիկա, եւ սոյն դրամագըլիխոյն շահովը կը հոգայ իւր կրթական ծախուց մեծ մասը, եւ ոչ Ամերիկայի Պորտ Ընկերութեան գանձանակէն, թէ եւ Հաստատութիւնն է ընդ հօկոդութեամբ Ամերիկացի Միախոնարաց Խարբերդին:

Ուսումնարանիս նպատակն է տալ Քրիստոնէական կատարեալ եւ անթերի կրթութիւնն մը առանց խորութեան ազգի եւ կրօնի:

**Հաստատութիւնս երկու գպրոցի կը բաժնուի
Արական եւ Իգական:**

ԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Արական դպրոցն ունի հետեւեալ ճիւղերն 1. Նախապատրաստական, 2. Ուսումնարան (Բուն Գոլէճ) 3. Աստուածաբանական Ճեմարան:

*Երբ տեսչութիւնն յարմար գատէ, ասմաց վըրայ Բժշկութեան եւ Օրէնսդիտութեան ճիւղերն ալ պիտի աւելինան:

Ցիշեալ ճիւղերու մէջ կը դասախոսուին հետեւ-
եալք:

1. Նախապատրաստական. նախնական կրթու-
թենէ զատ Հայերէն (Գրաբար), Անգլիերէն, Թըր-
քերէն, Գրահաշիւ (Աքէպրա), Հայոց Պատմութիւն,
Պատմութիւն Չորից ինքնակալութեանց, Մարդա-
կաղմութիւն:

2. Ուսումնարան. Ա. Տարի (Ֆրէշն) Երկրաչա-
փութիւն, Բարձրագոյն Գրահաշիւ (Խնիվլքսիթի Ա-
նէպրա), Բնական Պատմութիւն, Բնական Աշխար-
հագրութիւն, Տոմարակալութիւն, Հայերէն, Անգլի-
երէն, Թրքերէն:

Բ. Տարի (Սօֆոմը) Բարձրագոյն Գրահաշիւ (ա-
ւարտեալ), Եռանկիւնաչափութիւն, Տարրարանու-
թիւն, Ճարտասանութիւն, Տրամանութիւն, Բարո-
յական Գիտութիւն, Անգլիերէն, Թրքերէն, Լատի-
ներէն:

Գ. Տարի (Ճէ-Նէց) Բնագիտութիւն, Աստղա-
բաշխութիւն, Տիեզերական Պատմութիւն, Բնական
Աստուածաբանութիւն, Հանքաբանութիւն, Լատի-
ներէն, Յունարէն:

Դ. Տարի (Ունէց) Երկրաբանութիւն, Պատմու-
թիւն Քաղաքակրթութեան (Կիջօ), Մտաւորական
Փիլիսոփայութիւն, Ապացուցք Գրիստոնէութեան,
Միջնագգային Օրէնք, Ճաշակ Անգլիական Գրակա-
նութեան, Քաղաքական Տնտեսութիւն, Լատինե-
րէն, Յունարէն:

ՊԱՅՄԱՆՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Բուն Ուսումնարանն (Գոլէճ) ընդունուիլ ուղողը
դոնէ տասնուհինգ տարեկան ըլլալու է, գոհա-
ցուցիչ ապացոյց ունենալու է իւր բարի վարուց

եւ ուսման ընդունակութեանը, եւ կարող ըլլալու
է Նախապատրաստական Ճիւղի բոլոր դասերուն
քննութիւնը տալ:

ՔՆՆՈՒԹԻՒՆՔ

Ամէն տարուան վերջը՝ նոյն տարին աւանդեալ
դասերուն քննութիւնը պիտի լինի հանդիսաւոր
կերպիւ. Այս քննութեանց մէջ յաջողակ չեղող
աշակերտք չպիտի կարենան իւրեանց կարգը փո-
խել կամ ոչ ու ընդունիլ:

ԿՐՈՆԱԿԱՆ

Որովհետեւ այս Հաստատութեան նպատակն է
Քրիստոնէական կրթութիւն մը տալ, Տեսչութիւնը
մամնաւոր հոգ եւ ջանք ունի միացնել բարձրա-
գոյն բարոյական կրթութիւն մը մտաւորական եւ
Փիզիքական զարգացման հետ. Ուստի աշակեր-
տաց համար կան մամնաւոր աղօթքի ժողովներ
Ավորակէ եւ Զորեցաբթի օրերը. Նաեւ աշակերտք
պարտաւորեալ են Կիւրակէ օրերը կամ Շողոքա-
կան, եւ կամ Լուսաւորչական Եկեղեցւոյ պաշ-
տամանց ներկայ գանուկլ:

Ս. ԳԻՐՔ

Շաբաթ օրերէն զատ ամէն օր Ս. Գրքէն դաս
կըլլայ, եւ ան աշակերտ պարտաւոր է այս դասե-
րուն ներկայ գանուկլ:

ՄԱՐՄՆԱՄԱՐԳՈՒԹԻՒՆ

Հարաթը հինգ անգամ մարմնամարզութիւն (ճիմասթիք) կըլլայ. Նախապատրաստական ձիւղի աշակերտաց առանց գործիքի, իսկ Գօլէճի աշակերտաց դաւազանաւ կամ գնդակներով.

ԼԵԶՈՒ

Ուսումնարանիս լեզուն Հայերէն է, թէեւ դասերէն ումանց մէջ Անգլիերէն կը գործածուի:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

Հաստատութիւնս ունի Բնագիտութեան եւ Տարրաբանութեան գործիք. Երկրաբանական եւ Հանքաբանական հաւաքրումներ, դիտակ եւ մանրացոյց. Նաև սկսած է Բնական Պատմութեան հաւաքրումներ եւս ընել:

ԳՐԱՑՈՒՆ

Ուսումնարանիս գրատունն ունի 1000 հատորի չափ գիրք, Անգլիերէն, Հայերէն եւ Թրքերէն: Տեսչութիւնս մասնաւոր չնորհակալութիւն կը մատուցանէ անոնց որք գրատանս Հայերէն գիրք կընծայեն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բուն Գօլէճի աշակերտք ունին "Հայ Գրասերաց Ընկերութիւն", որոյնպատակն է Հայերէն լրա-

գրեր, տետրակիներ եւ գրքեր բերել տալ, եւ այս միջոցաւ ուսանողաց մէջ Հայերէնը յառաջացնել:

ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Նախապատրաստական ձիւղի եւ Գօլէճի առաջին ասրուան մէջ գծագրութիւնն ստիպողական իսկ նկարչութիւնը կամական է:

ԵՐԱՃՇՈՒԹԻՒՆ

Ջայնական երաժշտութիւն ըոլոր ուսանողաց կուսուցուի, իւսկ նուազարանաւն՝ աշակերտաց կամքին ձգուած է, եւ ասոր համար մասնաւոր ստակ կը պահանջուի:

ԱՏԵՆԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԻՃԱ- ԲԱՆՈՒԹԻՒՆ

Բոլոր դպրոցական ընթացքին մէջ Հարաթ օրերը մինչեւ կէսօր ատենաբանական կրթութիւններ կը լինին, աշակերտք շարադրութիւն եւ ճառ կը կարդան, գոյ կարտասանեն, եւ այլեւայլ նիւթոց վրայ կը վիճին: Հարաթ իրիկուններն այլ յանպատրաստից (էքսթէմփօրէնսիրո) ատենաբանութիւններ եւ տրամախօսութիւններ կըլլան:

ՄԱՍՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Անոնք որ կուզեն, կրնան հաստատութեանս մէջ մասնաւոր ընթացք մը աւարտել, առ պայմանաւ որ դաստիարակութեան ծախուց կրկնը հա-

տուցանեն։ Այս ընթացքն յաջողութեամբ աւարտազր Նախազահէն վկայական մը պիտի ընդունի, ուր ուսանողին առած դասերը նշանակուած պիտի լինին։

ՇՐՋԱՆՔ

Ուսումնարանիս տարին երկու շրջանէ կը բաղկանայ, որոց վերջն երկու ամիսի չափ վագանձ կը լինի, Առաջին շրջանը կըսկսի Սեպտեմբերի^{*} երկրորդ Զորեքշաբթին եւ կը տեւէ մինչեւ Կադանդ[†] եւ տասներկու օր վագանձ ըլլալէն յետոյ երկրորդ շրջանը կըսկսի որ Զատկին 12 օր վագանձ ունկնալէն վերջ կը տեւէ մինչեւ Յուլիսի^{*} երկրորդ Հինգշաբթին։ Յուլիսի երկրորդ Երկուշաբթին մինչեւ Հինգշաբթի, մեծ քննութիւններն եւ ընթացաւարտից հանդէսը տեղի կունենան։

ԱՄԵԿԱՆ ԾԱԽՔ

Կերակուր	5—6 լիրա 0սմ.
Դաստիարակութիւն	5մէծիտ
Ուսումնարան	8մէծիտ
Նախ. ա եւ բ կարգ	6 "
" գ եւ դ "	4 "
Վարձք սենեկի	10—50 դէկ.
Այլ պատահական ծախք	5—20 "
Վագանձի ժամանակ զարոցէն կերակուր ըլլրուիր	

* Բատ Լատինաց

† Բատ Յունաց

Ուսանողներէն ոմանք կերակուրնին իրենք իշենց կը պատրաստեն եւ այս կերպը աւելի տնտեսական դասած են։

Գոյէճի աշակերտներէն ոմանք Նախապատրաստական ձիւղի մէջ զաս մը տալով գոնէ զաստիարակութեան ծախքերնին վճարելու կարող կը լինին։

Վճարելու անկարող ուսանողներէն դաստիարակութեան ծախտոց տեղ պարտամուրհակ կառնուիր

3. Աստուածաբանական ձեմարան, Մեկնութիւն Սրբազն Մատենից, Ճարտասանութիւն, Տրամաբանութիւն, Մտաւրական եւ Բարոյական Փիլիսոփայութիւն, Եկեղեցական Պատմութիւն, Վարչապետական եւ Գործնական Աստուածաբանութիւն, Յունարէն (ոչ առայժմ)։

Աստուածաբանական աշակերտք դաստիարակութեան եւ սենեկի ծախքերէ ազատ են։

ԻԳԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Իգական դպրոցն ունի երկու ճիւղ Նախապատրաստական եւ Գոյէճ։

Նախապատրաստական։ Ա. Տարի. Մտաւրը թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Անգլիերէն գերական, Քրիստոնէական, Կարդալ եւ Հեգել, Գրել

Բ. Տարի. Մտաւրը թուաբանութիւն, նոյն՝ Գրաւոր, Աշխարհագրութիւն, Անգլ. Քերական, Հայերէն գերականութիւն, Կարդալ, Հեգել, Գրել

Գ. Տարի. Գրաւոր թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Անգլիերէն, Հայերէն Քերականութիւն, Կարդալ, Հեգել, եւ Գրել

Դ. Տարի. Գրաւոր թուաբանութիւն, Անգլիերէն (Ա. Ըսթեցարան եւ Քերականութիւն), Գրա-

բար Քերականութիւն եւ Աւետարան, Հայ գրով
Թրքերէն, Պատմութիւն Հայոց, Կարդալ Հեղել Գրել:

Գոլբձ. Ա. Տարի. Գրահաշիւ, Մարզակազմութիւն, Անզիւթերէն, Գրաբար (Հապընտիր Քաղուածք Գրագաշեանի), Հայ դրութք Բրգերէն, Պատմութիւն Զորից Խնձռակալութեանց, Հեղեղ, Գրել:

Բ. Տարի. Երկրաչափութիւն, Ճարտասանութիւն, Բարոյական Գիտութիւն, Բնական Պատմութիւն, Տարրաբանութիւն, Թրքերէն, Անգլ. Գիրականութիւն, Անգլ. Հեղեղ. Ճառ:

զ. Տարի. Եռանկիւնաչափութիւն, Տրամաբանութիւն, Տիեզերական Պատմութիւն, Բնագիտութիւն, Անդիերէն, Թրըքերէն, Անգլ. Շարագրութիւն:

Գ. Տարի. Ներածութիւն Ա. Գրոց, Աստղաբաշխութիւն, Մտաւորական Փիլիսոփայութիւն, Բնական Աստուածաբանութիւն, Երկրաբանութիւն, Բուսաբանութիւն:

Ամբողջ գպրցական ընթացքին մէջ կարել, Զեւել եւ Ասեղնագործութիւն, Գիշերօթիկ աշակերտաց համար այ խոհանոցի գործեր կան

U. ԳԻՐԵ

Ամբողջ դպրոցական շրջանին մէջ ամէն օր Ա. Գրոց դաս կըլլայ:

ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ, ԵՒ ՂԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Նախապատրաստական ձիւղին մէջ զծագրութեան, իսկ զօլէցին մէջ նկարչութեան դաս կըլլայ:

ԵՐԱԾ-ՇՏՈՒԹԻՒՆ

Թէ ձայնական եւ թէ նուագարանաւ երաժըշտութեան դաս կը տրուի աշակերտուհեաց, բայց վերջնո՞յն համար մասնաւոր վարձք կը պահանջուի:

ԱՏԵՆԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՔ

Կախապատրաստական ձեւղի աշակերտուհիք
ամէն շարթու գոցեր կարտասանեն եւ շարադրու-
թիւններ կը կարգան, Գոլլէճի աշակերտուհիք ալ ճա-
ռեր կը կարգան,

ԵՐԶԱԿԻ

Հրջանները ճիշդ Արական Դպրոցին պէս են:

ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՔ

Աերակուր 5 Օմ. Միքա
Դաստիարակութիւն


Գովեան	4 մէծիս
Կախ.	3 մէծիս
" " " "	2 մէծիս

Վճարելու ամկարող աշակերտուհեաց դաստիարակութեան ծախքը կամ կը չորհուի՝ կամ տեղը պարտամուգհակ կառնուի:

Missionaries and others who wish teachers, male or female, from the College, are requested to state definitely the branches to be taught and the salary which they are willing to pay.

ԱՐԵՆ Ո-ՀԱՆՈՒՔ է-ՐԱՋԱԿ-Ր ՀՐԴԱՆԻ ԱՒՂՋՄ ՅԱՐԵ-
ՀԱՆ ԵՎԻՆՈՒՄ Է-Խ Ի ԱՐԱԿԱՆ ՀԱ-:

Ք. Հ. ՀՈՒԽԱՐԵ, ՆԱԽԱԳԱՀ



8/06 29

ՀՀ Ազգային գրադարան



NL0115025

